ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ԱԿՈՒՄԲԻ ՆԻՍՏ՝ «ԱՆԿԱՆԽԻԿ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԱՌԿԱ ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

21.10.2021 21:23

2021թ. հոկտեմբերի 21-ին ՀՀ փաստաբանների պալատում տեղի է ունեցել մասնագիտական ակումբի նիստ, որտեղ քննարկվել են «Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենքի նախագծում տեղ գտած խնդրահարույց կարգավորումները:

Քննարկմանը մասնակցել են ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը, նախագահի տեղակալներ Արմեն Ասատրյանը և Հարութ Ակլունցը, Ակումբի համակարգող Մարինե Ֆարմանյանը, Երիտասարդական խորհրդի նախագահ Միքայել Դանիելյանը և մի շարք փաստաբաններ:

Ըստ «Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ **Փաստաբանական ծառայությունների մատուցման վճարների ընդունումը իրականացվում է անկանխիկ ձևով, եթե այլ բան նախատեսված չէ օրենսդրությամբ**:

Փաստաբանների կողմից ներկայացվել են նախագծի ընդունման արդյունքում առաջ եկող խնդիրները: Միաժամանակ ստեղծվել է մասնագիտական աշխատանքային խումբ, որը կիրականացնի իրավակարգավորման համապարփակ ուսումնասիրություն և հանդես կգա առաջարկություններով:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })